

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 40/3

13 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Կապանի քաղաքապետարանի «Վ.Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ի վերաբերյալ Կապան քաղաքային համայնքի ղեկավարի 22.09.2015 թ-ի գրությամբ բերված բողոքը ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 06.08.2015 թ-ի թիվ 6113252 ակտի դեմ:

#### **Կապան քաղաքային համայնքի ղեկավարի բողոքում բերված փաստարկները.**

ՀՀ ֆինանսների նախարարության Կապանի տարածքային հարկային տեսչության պետի կողմից տրված հանձնարարագրի համաձայն 2015 թվականի հուլիսի 21-ին տեսչության աշխատակիցների կողմից իրականացվել է ստուգում Կապան քաղաքի Վազգեն Սարգսյանի անվան մանկական զբոսայգի ՀՈԱԿ-ում և կազմվել է թիվ 6113252 ակտը:

Տեղեկացնում ենք, որ Վազգեն Սարգսյանի անվան մանկական զբոսայգին հանդիսանում է համայնքային ոչ առևտրային կազմակերպություն և համաձայն իր կանոնադրության հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն: Բացի այդ, կազմակերպության աշխատանքները կրում են սեզոնային բնույթ և զբոսայգու ատրակցիոնները գործում են միայն ամառային ամիսներին: Նշենք նաև, որ կազմակերպությունում կանխիկ դրամի շրջանառությունը կազմակերպվում է հատուկ հաշվառման ենթակա կտրոնների /տոմսերի/ միջոցով: ՀՈԱԿ-ի ֆինանսավորումը կատարվում է համայնքի բյուջեից որպես սուբսիդիա: Ամառային ամիսներին սուբսիդիան պակասեցվում է հիմնադրի որոշմամբ սահմանված սակագներով տոմսերի վաճառքից առաջացած միջոցների չափով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով համայնքային միջոցների սղությունը բողոքաբերը խնդրում է վերանայել թիվ 6113252 ակտը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի 16.07.2015 թ-ի թիվ 6113252 հանձնարարագրի համաձայն Կապանի քաղաքապետարանի «Վ.Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 06.08.2015 թ-ի թիվ 6113252 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Վարդան Գրիգորյանի կողմից 20.07.2015 թ-ին ժամը 17:56-ին ք.Կապան, Ա.Մանուկյան 1 հասցեում գտնվող «Վ.Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ում կատարվել է 300 դրամի գնում: Մասնավորապես, կանխիկ դրամով գնվել է չորս հատ տոմս, որի դիմաց կանխիկ վճարված գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ստուգման պահին ք.Կապան, Ա.Մանուկյան 1 հասցեում գտնվող «Վ.Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ում հարկային մարմնի կողմից գրանցված ՀԴՄ առկա չի եղել: Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի

4-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, որի համար կիրառվել է նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 300.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետով հստակ սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է:

Իր հերթին, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի համաձայն՝ սույն օրենքով սահմանված դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական գործարքներ իրականացնելու պահին և վայրում հարկային մարմնում այդ վայրի հասցեով գրանցված հսկիչ-դրամարկղային մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում այդ վայրի հասցեով հսկիչ-դրամարկղային մեքենա գրանցված չլինելու համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է երեք հարյուր հազար դրամի չափով:

Քննարկվող դեպքում իրականացված ստուգմամբ հիմնավորվել է հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը պարտադիր լինելու պայմաններում «Վ.Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ի կողմից առանց հսկիչ-դրամարկղային մեքենայի գործունեություն իրականացնելու հանգամանքը: Այսինքն, «Վ.Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ի կողմից խախտվել են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, որի համար Ակտով կիրառվել է նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պատասխանատվությունը:

Հարկ է նշել նաև, որ Ակտը վերանայելու վերաբերյալ բողոքով բերված պահանջը, ըստ էության, հիմնավորվել է կազմակերպության աշխատանքների սեզոնային բնույթ կրելու, ինչպես նաև համայնքային միջոցների սղության հանգամանքներով, որոնք, սակայն, չեն կարող հիմք հանդիսանալ Ակտի իրավաչափության հարցը վիճարկելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 06.08.2015 թ-ի թիվ 6113252 սխառ թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

